ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Ռ. Գյանջումյան

<<ՀՐԱԶԴԱՆԻ N7 ՄԻՋՆԱԿԱՐԳԴՊՐՈՑ>>

ՊՈԱԿ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԴԱՍՂԵԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասղեկ՝ Լ. **ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն ***(***դասարանի ընդհանուր բնութագիրը***).***

7-րդ դասարանը բաղկացած է 6 սովորողներից (2 տղա, 4 աղջիկ)։ Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, կոնֆլիկտային իրավիճակներ գրեթե չեն լինում։ Ընկերասեր են, համախմբված, պարտաճանաչ կերպով կատարում են դասղեկի հանձնարարությունները։

9-րդ դասարանը բաղկացած է 5 սովորողներից (2 տղա, 3 աղջիկ)։ Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ։ Սովորողներն համախմբված են, աշխույժ և աշխատասեր։ Կոնֆլիկտային իրավիճակներն արագ հարթվում են։ Հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն։

2. Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում***.***

ա/ Ուսումնական տարվա ընթացքում իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակություն

բ/ Դաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները։

գ/ Կիրառել արդյունավետ մեթոդներ՝ դասերը ժամանակին և արդյունավետ պատրաստելու համար

դ/ Կանխել սովորողների բացակայությունները և ուշացումները։

ե/ Հետևել սովորողների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանմանը։

3. Հայեցի դաստիարակություն***.***

3.1 Հոգևոր դաստիարակություն.

Հոգևոր դաստիարակությունը արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգության փոխանցման կարևոր գործոն է։ Հայոց եկեղեցուն նվիրված դասերի միջոցով բարձրացնել սովորողների գիտակցությունը՝ կարևորելով աշակերտի քրիստոնյա լինելը, զարգացնելով նաև հոգևոր ժառանգության մասին գիտելիքները և բարոյական առանձնահատկությունները։

3.2 Գեղագիտական դաստիարակություն.

Կարևորել սովորողների գեղագիտական դաստիարակության խնդիրները , սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու բնական հարստություն, բարություն, գեղեցկություն , նրա մեջ արմատավորել սեր գեղեցիկի և բարու նկատմամբ։

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն.

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը պետք է սկսվի դպրոցից: Դաստիարակել հայրենիքին անշահախնդիր ծառայելու, ակտիվ աշխատանքային և հասարակական գործունեություն ծավալելու, հայրենիքին պիտանի մարդ դառնալու սկզբունքներով:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Կարևորել ֆիզիկական դաստիարակության դերը դպրոցում, նպաստել սովորողների ներդաշնակ ֆիզիկական և բարոյական բարձր հատկանիշների զարգացմանը, առողջ ապրելակերպի գիտակցմանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը մարդկային կարևորագույն գործունեություն է: Դաստիարակել ճիշտ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, որի շնորհիվ սովորողները կկարողանան ինքնահաստատվել , համագործակցել, պլանավորել ու վերահսկել սեփական գործողությունները, ձեռք բերել կյանքի հմտություններ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն. Բնապահպանական դաստիարակությունը շատ կարևոր է դպրոցում: Սովորողները պետք էկարողանան լուծել հիմնահարցեր, որոնք առկա են և վերաբերում են իրենց շրջապատին: Պետք է կարողանան տեսնել և գնահատել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խնդիրները:

4. Դպրոց-ընտանիք կապը**.**

Աշակերտի դաստիարակության արդյունավետությունը կախված է դպրոց-ընտանիք սերտ համագործակցությունից: Համատեղ աշխատանք տանել ընտանիքի հետ՝ երեխայի դաստիարակության հետ կապված խնդիրները հնարավորինս բարձր մակարդակի վրա դնելով:

N	ՈՒսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը
1	Գիտելիքը ուժ է:
2	Ի՞նչ է հայրենասիրությունը:
3	Հայրենիքս սկսվում է իմ ընտանիքից
4	Ուսուցիչ: Ով է նա, ինչ դեր ունի մեր կյանքում:
5	Իրավունքներ և պարտականություններ
6	Ահաբեկչությունը որպես մարդկության չարիք
7	Վնասակար սովորույթներ, թե՞ առողջ ապրելակերպ:
8	Բնական աղետներ
9	Ծնողներս ինձ համար, ես՝ ծնողներիս
10	Մեդիագրագիտություն
11	Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս
12	Մարդ, որին կուզեի նմանվել
13	Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ
14	Ինչպե՞ս զգուշանալ խաբեությունից
15	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
16	Իմ երազանքներն ու նպատակները
17	Հայոց անպարտ բանակ
18	Դպրոցական օրերի ուրախություններն ու դժվարությունները
19	Շրջակա միջավայի պահպանություն
20	Պահպանենք վարվեցողության կանոնները
21	Մայրական սեր
22	Մարդիկ, որոնց շնորհիվ մենք ապրում ենք:
23	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
24	Սպորտը իմ կյանքում
25	Իմ օրագրի ուրախ և տխուր էջերը
26	Ազատություն և ազատասիրություն
27	Սերը ոգեշնչման աղբյուր: Սերը որպես տիեզերական զգացմունք:
28	Դպրոցական քննություններ
29	Հայոց մեծ Եղեռն
30	Հայաստանի պատմության քառուղիներում
31	Գարնանային զարթոնք
32	Բնապահպանական խնդիրներ
33	Հայաստանի այն վայրերը, որտեղ կուզեի լինել
34	Ուսուցիչ, որին ես շնորհակալ եմ այն բանի համար, որ նա…